ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3816-Ա « 03 » օգոստոսի 2026 թ.

ՆԱՐԻՆԵ ՎԻԼՀԵԼՄԻ ՇԱՌՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.52 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 27-ի հ. Ն/48449-26 ծանուցումը, ինչպես նաև Նարինե Շառյանի հետ 2022 թվականի փետրվարի 4-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «դ» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Նարինե Վիլհելմի Շառյանին՝ 2026 թվականի օգոստոսի 4-ից ազատել «Երևանի Հովհ. Հովհաննիսյանի անվան հ.52 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի փետրվարի 4-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Հովհ. Հովհաննիսյանի անվան հ.52 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Գոհար Բլեյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246